ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1962 Общественные науки

ՀԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ռ. Փ. Հովհաննիսյան

# ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ 19-ՐԴ ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԵՎԱՏԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*19-րդ դարի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Կարինի «Պաշտպան Հայրենյաց» ազատագրական-հեղափոխական դաղտնի կազմակերպությունը, որի գործունեությունը դեռևս քիչ է ուսումնասիրված և առավել՝ քիչ լուսաբանված արևմտահայ ազատագրական շարժումների մեջ նրա դերի գնահատման տեսակետից՝։*

*«Պաշտպան Հայրենյաց»-ի գործունեության, որպես 19-րդ դ. 80-ական թվականներին արևմտահայ ժողովրդի առաջին կազմակերպված ըմբոստության, գնահատման խնդրում կարևոր նշանակություն ունի անշուշտ այն իրողությունը, որ նրա ոգեկոչման ու հետագա պայքարի դրական ու բացասական բոլոր կողմերը հիմնականում բնորոշ են 19-րդ դարի 60—80-ական թվականներին հայ ժողովրդի ազգային վերածնունդն ազդարարող ազատագրական շարժումներին բնդհանրապես։*

*«Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս մեզ հաջողվեց ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի և Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվներում (АВПР) ծանոթանալ կազմակերպության գործունեության առանձին մութ կողմերը լուսաբանող մի շարք նոր փաստաթղթերի։ Ոչայտ բերվեցին նաև 19-րդ դարի 80-ական թվականներին արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին նվիրված այլ վավերագրեր (այդ վավերագրերը մեր կողմից կհրապարակվեն այլ կապակցությամբ)։*

*Դրանց մեջ խիստ արժեքավոր են ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Թ. Ագատյանի ֆոնդ) պահպանված, «Պաշտպան Հայրենյաց»-ի գործունեության շրջանում Կարնո թեմի առաջնորդ Մ. Օրմանյանի նամակները, որոնք Կարինում տեղի ունեցած ձերբակալությունների մասին մանրամասն հաղորդումներ են՝ ուղարկված Կ. Պոլիս Ներսես Վարժապետյան պատրիարքին։*

---

1 *Արժեքավոր պետք է համարել «Դարձ» ամսագրի 1917 թ. № 3-ում Սարուխանի «Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում» հոդվածը և Մ. Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» աշխատության «Պաշտպան Հայրենյաց»-ին նվիրված էջերը։ Որպես սկզբնաղբյուրներ կարևոր են Մ. Օրմանյանի խիստ ժլատ տողերը և Հ. Նշկյանի ու Տ. Կերեքեյանի հուշերը (վերջինը չտպագրված), ինչպես նաև ժամանակի մամուլը։*

բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում թուրքիայում ռուսական դիվանագիտության ներկայացուցիչների, առավելապես Կարինի ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Դեննետի և Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի, Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (АВПР) պահպանվող զեկուցագրերը։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և նրան հաջորդած Սան-Ստեֆանոյի համաձայնությունից ու Բեռլինի կոնգրեսից հետո հայ ժողովուրդը հուզումնալի մի շրջան էր ապրում։ Հորդայել էր պայքարի նրա կորովը և օգը թնդում էր «երկաթյա շերեփի» զնգոցով։ Երբ բարենորոգումների գործադրությունը հապաղելու հետ միասին «...հարստահարիչ ցեղին կներվեր զինվա՝ մնալ, և հարստահարյալ ցեղին զինվիր խստությամբ կարգիլվեր, իրողությանց բնական ընթացքով հարստահարյալները հորդորվեցան դագտնապետ զինվելու, զինյալ հարստահարիչներուն ընդդիմանալու...»[2]։

«Կեցցե՛ Հայաստան» կը պոռայինք ու «Մեր Հայրենիք թշվառ անտեր» կերգեինք, «թող կործանի Թուրքիան» գոչելով։

«Ազատն աստված» կորոտայինք, բաժակներ քամելով Նալբանդյանի հիշատակին»[3]։

Այդ շոնդալից օրերին Կարինի հայրենասիրական զաղափարներով ստեղծված երիտասարդության ջանքերով հիմնադրվեց «Բարձր Հայոց ընկերություն»։ Թուրքական իշխանությունները «բարձր» բառի մեջ իրենց համար ինչ որ ստորացուցիչ երևույթ տեսան և կասկածեցին նրա քաղաքական բնույթի մասին, ուստի այն շուտով խափանվեց։ Իսկ ավելի ուշ՝ 1881 թ. մայիսին[4] երիզագործ Խաչատուր Կերեքցյանի ղեկավարությամբ հիմնադրվեց «Պաշտպան Հայրենյաց» հեղափոխական գաղտնի կազմակերպությունը, միշտ իր վրա կրելով «Երկրագործական ընկերություն» անմեղ անունը (սկզբում նախատեսվում էր կազմակերպությունը անվանել «Մասիս լեռների միություն», բայց հետո նպատակահարմար գտան այն կոչել «Պաշտպան Հայրենյաց»)։

Աշխատանքների կոլեկտիվ ղեկավարությունը իրականացվում էր հինգ հոգուց կազմված (ըստ Հ. Նշկյանի՝ վեց) հեղափոխական խորհրդի («Գլխավոր խորհուրդ»)[5] միջոցով, առանց որևէ գրավոր կանոնադրության։

Կազմակերպության ծրագիր-մինիմումը եղել է հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, որի մասին հետագայում, դատավարության ժամանակ, խոստովանում են նրա բանտարկված և թուրքական դատարանի առջև կանգնած անդամները, իսկ ծրագիր-մաքսիմումը՝ Հայաստանի անկախության (թագավորության) վերականգնումը, որը հասկանալի պատճառներով չեն խոստովանում նրանք։

1882 թ. նոյեմբերին կազմակերպությունը, որի անդամների ու համակրողների թիվը արդեն հազարների էր հասնում, պատահականորեն հայանա-

2 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երևան, 1929, էջ 119։

3 Հ. Մ. Նշկյան, Առաջին կայծերը, 1930, էջ 112—113։

4 Մ. Օրմանյանի մոտ («Խոհ և խոսք», էջ 119) տրված է 1882 թ. առաջին կեսը, որը հավանաբար նա նշել է կազմակերպության մեջ իր մասնակցելու կամ այն իրեն հայտնի դառնալու ժամանակը։

5 Լեոն շփոթում է, ենթադրելով, որ «Պաշտպան Հայրենյաց»-ը սկզբում կոչվել է «Գերագույն խորհուրդ», մինչդեռ այդպես կոչվել է կազմակերպության ղեկավար օրգանը։ Տե՛ս նրա «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հ. 1, էջ 139, Փարիզ, 1934։

բերվում է և հիմնականում ջախջախվում, թեպետ նրա գոյությունը իր գործունեության դանդաղ ու խաթարված ընթացքով հարատևում է մինչև 90-ական թվականների սկզբները:

Հիշյալ ընկերության մասին եղել են հակասական, նույնիսկ անվանարկող կարծիքներ, մանավանդ այն առնչությամբ, որ թուրքական իշխանությունները թխել էին մի հրեշավոր սուտ, օտարերկրյա գործակալների պատիր դավեր տեսնելով այդտեղ:

Ապա նրանք մեծադղորդ աղմուկով փութացին ներկայացնել այն որպես հայկական մի խոշոր ապստամբության սկիզբ, իսկ քիչ ուշ, վախենալով որ այդ ցնցող լուրը միջամտության նոր առիթ կտա «քրիստոնեաների պաշտպան» Եվրոպային, հեռհեռ իջեցրին կազմակերպության և նրա գործունեության նշանակությունը մինչև քրեական ինչ որ դանցանքների աստիճան:

Որոշակի պատճառներով այն տարբեր ձևերով է ներկայացվել նաև ժամանակի հայ մամուլի էջերում:

Իրականում այդ շարժումը համաժողովրդական բնույթ ուներ: Այն իր ճյուղավորումներով տարածվել էր ողջ Արևմտյան Հայաստանում և կապեր էր ստեղծել արևելահայության հետ, փորձելով հանդես դալ որպես արևմտահայ աշխատավորության սոցիալական ու քաղաքական շահագործման դեմ ուղղված ժողովրդական ընդվզումների համահավաք կենտրոն:

Երբ հայրենի հողի վրա ստեղծված այդ ազատագրական-հեղափոխական կազմակերպությունն ապրում էր դեռ իր գաղափարական ու գործնական աշխատանքների որոնումների շրջանը, Խ. Կերեքցյանը մեկնում է Վան և հանդիպում արևմտահայ ազատագրական շարժման ճանաչված ռահվիրայի՝ Մկրտիչ Խրիմյանի հետ: Սխալ պետք է համարել հարցաքննությունների ժամանակ ձերբակալվածների, հատկապես Խ. Կերեքցյանի վկայությունները, հիման վրա ստեղծված այն կարծիքը, թե Խրիմյանն իբր առաջարկել է դադարեցնել «Պաշտպան Հայրենյաց»-ի գործունեությունը, հաշվի առնելով, որ հայերը փոքրաթիվ են և այդ ամենը մեր ժողովրդի համար կուննա ողբերգական վախճան, նույնիսկ սպառնացել է՝ մատնել նրանց թուրքական իշխանություններին: Նա խրախուսում է և խորհուրդ տալիս լինել ավելի աչալուրջ ու երիտասարդական ավելորդ տարբերությամբ չփչացնել դժվարությամբ սկսած «սուրբ գործը»:

Վանից Խ. Կերեքցյանը, Խրիմյանի խորհրդով, անցնում է Թբիլիսի, որտեղ հանդիպումներ է ունենում արևելահայ մի շարք գործիչների, այդ թվում հայ «նիհիլիստների» հետ:

Որոշվում է ապստամբության հարցը խորը և բազմակողմանի ուսումնասիրելու և կազմակերպության աշխատանքներն ավելի գործնական դարձնելու նպատակով Թբիլիսիի գործիչներից մեկին հղել Կարին: Այդ նպատակով էլ Կարին են գնում Բագրատ Նավասարդյանը և Արսեն Թոխմախյանը:

«Պաշտպան Հայրենյաց»-ի անդամների համար անդամատոմսեր (թերևս նոր համարակալված տոմսեր) ստեղծելու գաղափարը պատկանում է Բ. Նավասարդյանին, որը 1882 թ. ամռանը Եվրոպայից անցնելով Թուրքիա, Կ. Պոլսում հանդիպում է Ն. Վարժապետյանին, ապա այցելում Կարին, Վան, կազմակերպության գործունեության հետ կապված տարբեր հարցերի շուրջը համաձայնության գալիս Մ. Օրմանյանի ու Մ. Խրիմյանի հետ: Կարինում Նա-

վասարդյանը օգնում է «Պաշտպան Հայրենյաց»-ի կազմակերպական ամրապնդմանը։

Նույն շրջանում Բ. Նավասարդյանի հանձնարարությամբ Թբիլիսիից Կ. Պոլիս էր մեկնել ու բարձր դիրքի հասել ռուս բժշկուհի Աննա Իվանովնա Սորոկինա-Շչերբանինան, որը հետամուտ էր հայկական դատի հաջողությանը[6]։

Վավերագրերից մեկում[7] խոսվում է կազմակերպության անդամության տոմսերից 2400-ը Խաչատուրի բնակարանում տպագրելու և նրանցից 300-ը Վանի հեղափոխական խորհրդին ուղարկելու մասին։ Այս խորհուրդը հավանաբար Վանում գործող «Սև Խաչ» կազմակերպության գործադիր օրգանն էր, որի գործունեությունը հեղափոխական-ազատագրական որոշակի բնույթ ստացավ «Պաշտպան Հայրենյաց»-ի հետ կապվելուց և հատկապես 1882 թ. Կարինում կատարված ձերբակալություններից հետո[8]։

Նույն փաստաթղթում կարդում ենք, որ ձերբակալության ժամանակ Պալատ Տեր-Ղազարյանի մոտ գտած անդամատոմսը կրել է 4374 համարը[9], իսկ Հարությունի մոտ եղած տոմսը վկայել է՝ նրա հայկական ազատագրական բանակի ենթասպա լինելը։ Հիշյալ № 4374 վկայականը ստորագրված է եղել «Պ. Հ.»։ Այն է «Պաշտպան Հայրենյաց»[10]։

Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Օրմանյանը, «...ընկերակիցներու արձանագրության տոմսեր բաշխելու ձևը գաղտնության պահանջին չէր համարեր, և ձախող հետևանք ալ ունեցավ»[11]։

Ընկերության անդամների համար սահմանվել էր անդամավճար՝ տարեկան 1/4 մեջիդիե[12]։

Կազմակերպությունն ունեցել է դինագործական գաղտնի արհեստանոց Ավետիս Վեմյանի ղեկավարությամբ, որը բանտարկությունների նախօրյակին պատրաստվում էր մեկնել Զեյթուն, որպես կազմակերպության ներկայացուցիչ և մնալ այնտեղ, հավանաբար, Զեյթունում կենտրոնացված զինագործարան ստեղծելու միտումով։

«Պաշտպան Հայրենյաց»-ի մեջ եղել են պրոֆեսիոնալ գործիչներ, որոնք վարձատրվել են ու բերևս զբաղվել միայն ընկերության աշխատանքներով, իհարկե որևէ այլ զբաղմունքով քողարկելով իրենց գաղտնի գործունեությունը։ Կազմակերպությունը կառուցված է եղել տասնապետության սկզբունքով և նրա անդամներից բչերն ևս միմյանց ճանաչել, որը և հնարավորություն տվել

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 335, գ. 11, թերթ 46—48։

7 АВПР—ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 113—119.

8 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երևան, 1929, էջ 119։

9 Կարինի առաջնորդարանից Կ. Պոլիս ուղարկած Մեղադրական ակտի պատճենում՝ № 4274 (տե՛ս ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ագատյանի ֆ., 12—11519)։

10 Արևմտահայ արտասանությամբ, հավանաբար «Պաշտպան»-ը «Բաշտպան» կարդալով, երբեմն առանձին դեպքերում հիշյալ փաստաթղթի տակ գրված «Պ. Հ.»-ի փոխարեն գրվում է «Բ. Հ.» (տե՛ս «Մշակ», 1883, № 78)։

Դուցե նույն պատճառով էլ Ռուսաստանի արտաքին բաղաքականության արխիվում եղած վավերագրում գրված է «В. Н.», որը, ենթադրում ենք, պետք է կարդալ որպես լատիներեն տառեր, այսինքն նույնը, ինչ որ «Մշակ»-ում «Բ. Հ.»։

11 Մեկ մեջիդիեն ռուսական այն ժամանակվա դրամով հավասար էր 1 ռ. 60 կ.։

12 Այս կազմակերպությունը («Սև Խաչ») հետագայում աստիճանաբար հանդիսացավ Վանում բուռբոնյան «Արմենական» կուսակցության։

շատերին հետագայում խուսափել ձերբակալությունից։ «Ձերբակալվածներ 72 հոգիե անդին չանցան, զի տասնապետական դրության հետևողությամբ ընկերակիցների ծանոթությունը անձուկ շրջանակի մեջ կը պարփակվեր...»[13]։

Որոշվում է «Պաշտպան Հայրենյաց»-ի ղեկավարությունը տեղերում իրագործելու նպատակով, Արևմտյան Հայաստանի բոլոր քաղաքներում ստեղծել հինգ հոգուց կազմված հեղափոխական խորհուրդներ, և այն մասնակիորեն իրագործվում է։

Կազմակերպության ղեկավարները մտադիր էին կապեր հաստատել նաև քուրդ ցեղապետերի հետ, որը այդպես էլ նրանց չհաջողվեց։ Այդ ուղղությամբ կազմակերպության ձեռնարկած նվազ ջանքերը վերջացան անհաջողությամբ։

Նախատեսվում էր 30 տարում շարժման մեջ ընդգրկել 300.000 մարդ, Հետևաբար որոշված էր հաջողության հասնելու համար պայքարել երկարատև ու համբերատար։ Թեպետ, ինչպես կարդում ենք նույն զեկուցագրում, կազմակերպության գլխավոր խորհրդի հրահանգները կազմված էին հեղափոխական ոգով, և կոչ էր արվում ամենուր բարձրացնել ապստամբության դրոշը։

Այս հանգամանքը վկայում է շարժման մեջ եղած «արմատական» և «չափավոր» թևերի գոյության մասին, որոնց միջև եղած հակասությունը հետագայում անխուսափելիորեն սրվեց, բաժանելով պայքարի նրանց միասնական ճանապարհը արևմտահայ ժողովրդի ազգային երկունքի այդ ալեկոծ ժամերին։

Նույն փաստաթղթում պահպանվել են կազմակերպության հետ կապված մի շարք, հիշատակության արժանի, կարևոր մանրամասնություններ։ Հետաքրքիր են հատկապես ընկերության մեջ ընդունելության կազմակերպման մասին հատվածները։

«Ալեքսանդրը (Ալեքսան Էթալիկյան—Ռ. Հ.),—կարդում ենք հիշյալ վավերագրում,—դիմում է ընկերության մեջ ընդունվողներին հետևյալ խոսքերով. Ես գրանցում եմ Ձեզ ընկերության մեջ որպես զինվոր։ Հարկ եղած ժամանակ Ձեզ կբաժանվի զենք և ամեն օր կստանաք մեկական մեջիդիե։ Մենք կվերականգնենք (մեր—Ռ. Հ.) թագավորությունը։ Բացի այդ նրա կողմից տարածվում էին հեղափոխական այլ մտքեր։ Գալուստին նշանակված էր ամսական երեք լիրա[14] վարձ, որից 9 լիրան Ալեքսանդրի կողմից նրան տրված էր նախօրոք, համագործակիցներից (ընկերության անդամներից—Ռ. Հ.) նախկին վկայականները հավաքելու և նրանց նոր, համարակալված վկայականներով փոխարինելու համար, որոնցից նա հասցրել էր բաժանել մոտ 80-ը[15]։

«Հովհաննեսը արձանագրել է նաև Շավարշի կողմից երդվեցրած ձիթողցի վարժապետ Գալուստի 10 անձերը, որոնց տներից վնասակար հայտարարություններ պարունակող թղթեր երևան եկած են»[16]։

---

[13] Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 120։
Ձերբակալվածների թիվը այլ տեղում Օրմանյանը հաստատում է 76-ի։

[14] Մեկ լիրան հավասար էր ռուսական 8 ռուբլու։

[15] АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1525, л. 113—119։ Ըստ. Հ. Նշկյանի, այդ վկայականները հավաքվում էին ու ոչնչացվում Ներսես պատրիարքի հրահանգով (տե՛ս Նր. «Առաջին կայծերը»)։

[16] ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆոնդ, 12-րդ—11519։

Հակոբը Սերոբին ընկերության մեջ ընդունելիս[17] արտահայտվեց,—ես դրանցում եմ քեզ աշխարհազորում, կտամ քեզ զենք, դու կստանաս օրական մեկ մեջիդիե և կմասնակցես քաղաքից դուրս զինվորական ուսուցումներին։

—Մինասը (Մինաս Էլպեկյան—Ռ. Հ.) 130 հավաքագրական վկայական է հանձնել Խաչատուրին, որը հավաքագրել էր հինգ հոգի, նրանցից մեկին՝ Հաջի Հովհաննեսին հայտնելով, որ ինքը եղել է Թբիլիսիում, որտեղ նրաս դրել է նիհիլիստների ցուցակում։ Բացի դրանից նա ընդունել է նրանից ընկերությանը հավատարիմ լինելու երդում և բաժանելու համար հանձնել է հավաքագրական 100 [110?] վկայական։ Սարգիս օղլին հավաքագրել է մի քանի մարդ որպես զինվոր...

Հայկական աշխարհազորի մեջ տարբեր ժամանակներում հավաքագրված մի շարք մարդկանց անուններից հետո, մեղադրական ակտում ասվում է. «Թաթոսը հայտնել է Ալեքսանին, որ իր կողմից զինվորներ են հավաքագրվում հայկական թագավորության առաջիկա կազմակերպման կապակցությամբ։—Վերջինիս տանը գտնվել են լիտոգրաֆիական քարեր, որոնք ծառայել են հեղափոխական թռուցիկներ տպագրելուն։ Խուզարկության ժամանակ նման թռուցիկներ գտնվել են նաև Թաթոսի մոտ։ Դավադրության բացվելու հաջորդ օրը հեղափոխական կոչերով լի արկղը Տիգրան[18] օղլու տանից [այլ տեղում՝ Պողոս Թերզիբաշի տանից—որ ավելի հավանական է], տեղափոխված էր Մարուքեի[19] բնակարանը, որը Միքայելի հետ միասին այրել է այնտեղ եղած թղթերը...»։

Հավաքագրական վկայականները վերնագրում ունեին հնում թագավորած Հայկազյան, Արշակունի, Բագրատունի, Ռուբինյան հայկական դինաստիաների զինանշանները։

Բուն երդմնագիրը տպագրված էր երկու խաչաձևված սրերի մեջ»[20]։

Տասնապետների վկայագրերի վրա հրացանավոր զինվորներ էին նկարված, իսկ նրանց առջև մի բերդ....

Այդ վկայագրերի վրա «...գրված է եղել ազգին համար արյամբ չափ աշխատել»[21]։ Նախատեսվում էր ապստամբություն սկսելիս թուրքական ոստիկանությանը խուճապի մատնելու նպատակով մի քանի ջոկատներ մարտի հանել ռուսական զինվորական համազգեստով։ Այդ մտահղացումը նրանց մեջ հավանաբար ստեղծվել էր 1876 թ. ապրիլին, բուլղարական ապստամբության ժամանակ Գեորգի Բենկովսկու ջոկատների նույնանման փորձի հաջողությունը։

Մ. Օրմանյանի նամակներից մեկում բերված է բանտարկյալների մի մասի ազատ արձակվելուց հետո առ 1883 թ. հունվարի 29-ը բանտում մնացած 65 մարդու լրիվ ցուցակը, թեպետ նույն թվի մարտի 5-ին նամակում նա գրում է, որ ինքը իբր ուղարկել է 76 հոգու ցուցակ։ «Նամակիս հետ գործոցն սկզբեն

---

17 Ձեկուցագրի հեղինակը նարավոր է, որ սխալված լինի—դուցե պետք է լինի Հակոբ Սերոբյանին ընդունելիս, կամ Հակոբը Քերոբին ընդունելիս։

18 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 113—119.

Տե՛ս նաև ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., 12-րդ—11519։

19 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ. Թ. Ազատյանի, 12-րդ—11507։

20 Խ. Կերեքցյանի կրտսեր եղբայրը։

21 Առաջնորդարանի ծառայող (փոքրավոր)։

բոլոր բանտարկելոց ցուցակը կը հղեմ ընդ ամենն 76-ին և սկզբեն և հետո թողվածները 23, իսկ մնացածներն են 53»[22]։

Օրմանյանն ամենահավաստի աղբյուրն է, որ մեզ տալիս է բանտարկյալների քիչ թե շատ լրիվ և ճիշտ ցուցակը, նշելով նաև նրանց սոցիալական կազմը և հիմք տալով ասելու, որ կազմակերպության շարժիչ ուժը եղել է մայրաքաղաքի արհեստավորական դասը և շրջակա գյուղացիությունը։ «...Գրեթե բոլորը կամ բոլորովին կարոտ են կամ օրը աշխատող և օրը ուտող»[23]։

Այս հանգամանքը չի բացարկում շարժման մեջ հասարակական այլ խավերի մասնակցությունը։ Իհարկե չէր սխալվում թուրքական դատարանը ենթադրելով, որ ղեկավար կորիզը մեծ մասամբ խույս տվեց ձերբակալություններից ու պատժից։

«Թուրքական դատական իշխանություններին հաջողվեց հայտնաբերել խնամքով պատրաստված հեղափոխական մեքենայի (механизм) մասնիկը միայն, մինչդեռ գլխավոր մեքենագետները մնացին մի կողմ, չբացահայտված»,—զեկուցում էր Կարինի ռուսական գլխավոր հյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին[24]։

Օրմանյանի նամակներից երևում են, որ ձերբակալվածների զգալի մասը երիտասարդներ էին, անգամ պատանիներ։ Նրանցից ամենատարիքավորները Պալաս Տեր-Ղազարյանն ու Խաչատուր Կերեքցյանն էին ընդամենը 35—36 տարեկան։ Մանրամասը նկարագրված են ինկվիզիտորական այն գարշելի հարցաքննությունները, որոնց ենթարկվում էր իր տունը, պատիվն ու ընտանիքը պաշտպանելու, իր հայրենիքի ազատության համար զինվորագրված այդ երիտասարդությունը։

Շատ հետաքրքիր է նամակներից մեկում հայտնած տեղեկությունն այն մասին, որ Կարինի հույները մի փոքրիկ գումար են հավաքել և իրենց առաջնորդի միջոցով հանձնել Մ. Սրմանյանին՝ ձերբակալվածների ընտանիքների օգնելու նպատակով։ Այդ հույն ազգաբնակչության լուռ համերաշխությունն էր իրենց հայ բարեկամներին[25]։

Որպես 1883 թ. ապրիլի 9-ի նամակի հավելված, 11 ու կես էջի վրա տրված է մեղադրական ակտի պատճենը հայատառ թուրքերենով[26]։

Պետական մեղադրողի եզրակացությունն այն էր, որ մեղադրյալները հեղափոխական ճանապարհով ցանկացել են Թուրքիայից անջատել «Օսմանյան երկրների մի մասը, այսինքն Էրզրումը և շրջակայքը»։

1883 թ. ապրիլի 7-ին սկսվում է դատավարությունը, որը արևմտահայերի առաջին քաղաքական դատն էր Թուրքիայում։ Այն տևում է մինչև հունիսի 1-ը։ Ձերբակալվածներից 40-ը դատապարտվում են տարբեր ժամանակների (5-ից 15 տարի) բանտարկության։

---

22 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, 12-րդ—11517։

23 Նույն տեղում, 12-րդ—11512։ Տե՛ս նաև АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 83—85.

24 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 123—128

25 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., 12-րդ—11508։

26 Այս նամակը ստորագրել են ազգային ժողովի ատենապետը, ատենադպիրը և առաջնորդական փոխանորդը (Օրմանյանն արդեն մեկնել էր Կ. Պոլիս)։

Մի այլ նամակում կարդում ենք, որ Կարինի կուսակալը ապօրինի կերպով հայ պաշտոնյաներին ամենուր փոխարինում է մահմեդականներով, քաղաքականություն, որն ուժեղացել էր Բեռլինի կոնգրեսից հետո և յայն ծավալ ստացել հատկապես Հայկական կուսակալություններում։

Գրական թանգարանի արխիվի Բ. Նավասարդյանի ֆոնդում պահպանվում է «Պաշտպան Հայրենյաց»-ի ղեկավարներից մեկի՝ Կ. Նշկյանի 1913 թ. Ֆրեդ նոյից Թիֆլիս՝ Բագրատ Նավասարդյանին գրած նամակը[27]։ Փաստաթուղթ, որը կարևոր մանրամասնություններ է պարունակում այդ շարժման մի բանի չլուսաբանված խնդիրների և նրանց հետ կապված առանձին անհատների դիմագծերի ճշտման առումով։

Հաստատվում է, որ իրոք «Պաշտպան Հայրենյաց»-ը կապված է եղել Թիֆլիսի հետ, հրահանգներ է ստացել այնտեղից, խրախուսվել է։ Այստեղից էլ երբեմն անհեռատես տղայամտությամբ անժամանակ հոխորտանքի են մղել կազմակերպության անդամներին։ Գեներալ Դիմիտրի Տեր-Ասատուրյանը նույնիսկ ռուսական բանակների կողմից գինված օգնության հույսեր էր ներշնչում Թիֆլիսից Կարին վերադարձող Կ. Նշկյանին[28]։

Այս բոլոր փաստաթղթերն էլ արժեքավոր են ոչ միայն նշված կազմակերպության գործունեությունը, այլև արևմտահայության XIX դ. 80-ական թվականների սոցիալ-քաղաքական վիճակը յայնորեն լուսաբանելու դիտումով։ Ինչպես նաև ճիշտ ուղենշվելու հայ ազատագրական շարժումների վերելքի ու վայրէջքի այն ոլորապտույտներում, որ ապրեց «Երիտասարդ Հայաստան»-ի ատաղձը կազմող արևմտահայ տեղափոխությունն իր խանդաղորը արշալույսին, իր «առավոտյան պահուն»։

Միանգամայն իրավացի է վերը նշված գեկուցագրերի հեղինակների այն պնդումները, որ «Պաշտպան Հայրենյաց»-ի ծայրուղիները վերջավորվում, երբեմն էլ սկզբնավորվում են Կ. Պոլսում[29], Թիֆլիսում, Պետերբուրգում, մենք նասեինք նաև Վանում[30]։

Հետաքրքիր է, որ այդ կապը ցարական չինովնիկները (այստեղ Դեննիսը) տեսնում էին առաջին հերթին Թբիլիսիի «նիհիլիստների» հետ, իսկ այդ ածականով նրանք հաճախ պիտակում էին ոչ միայն նարոդնիկներին ու դեմոկրատ-հեղափոխականներին, այլև լիբերալներին, առանց որոշակի տարանջատելու մեկը մյուսից։

1882 թ. դեկտեմբերի 27-ի թվակիր նամակում Կ. Կամսարականը գրում է Կ. Պոլիս, որ Վանում եղած դաղտնի կոմիտեները (ուրեմն նրանք եղել են) այլևս չեն գործում դրամ չլինելու և «խելացի ու փորձված հայերի» խորհրդով։ Անշուշտ ավելի հավանական է, որ այդ կոմիտեները կապվել էին «Պաշտպան Հայրենյաց»-ի հետ և անցել խորը ընդհատակ։ Եվ ինչպես վերևում տեսանք, ընկերության անդամատոմսեր էին ստացել Կարինից։

27 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆոնդ 2-րդ—271։

28 Նույն տեղում։

29 Կ. Պոլսում այդ օրերին բանտ նետվեց «Մամուլ»-ի խմբագիր Գ. Այվազյանը, որին մեղադրում էին «Պաշտպան Հայրենյաց»-ի հետ կապեր ունենալու մեջ։

30 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 83—85 и 133.

Հաղորդումներում շոշափվում են նաև խիստ կարևոր, բայց դժբախտաբար տակավին քիչ լուսաբանված հայ-ասորական և հայ-քրդական միության ստեղծմանը վերաբերվող մի շարք նոր հարցեր։

1881 թ. փետրվարի 23-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովին գրած զեկույցում Կոնստանդին Կամսարականը հայտնում է, որ ասորիների առաջնորդները համակարծիք չլինելով իրենց Մարշիմոնի[31] առաջարկին, թուրքական կառավարության դեմ խռովություն նախապատրաստող բուրդ Բրադուլլահ[32] շեյխին օգնելու մասին, Մարշիմոնին դահրնկեց անելու սպառնալիքով պահանջել են միանալ ոչ թե շեյխին, այլ հայերին և անմիջապես գործնական բանակցություններ սկսել վերջիններիս հետ, իրենց միացյալ ուժերի հետագա գործունեությունը ուղենշելու համար։

«...Նեստորականները,—գրում է Կ. Կամսարականը,—առաջարկում են Վանի հայերին անհրաժեշտության դեպքում դուրս բերել մինչև 15 հազար կամավոր, հայերից պահանջելով միայն Հ. Մարտինի սիստեմի 1000 հրացան»[33]։

Նույն զեկուցագրում կարդում ենք, որ Վանի հայ երիտասարդությունը բոլոր հասարակական վայրերում հանդես է գալիս կառավարության դեմ ուղղված զինված ապստամբության բացահայտ կոչերով։ Եվ եթե հայկական հարցը դրականորեն չլուծվի, այդ դեպքում հայերի կողմից ապստամբական շարժումները թուրքական կառավարության դեմ անխուսափելի են։

Հաղորդվում է նաև, որ Վանում թուրքական իշխանությունները գաղտագողի զինում են բոլոր մահմեդականներին, ինչ խոսք հայ ազգաբնակչության հետ հաշվեհարդար տեսնելու նպատակադրումով։

1881 թ. մարտի 7-ին Կարինից գրված մի զեկուցագրում[34] կարդում ենք Վարդան Մամիկոնյանի և «Սայր Հայաստան» նկարների ոչնչացման, ամենուր ժողովների ու միտինգների բռնի, նույնիսկ զենքի ուժով խափանման, հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդման արգելման վերաբերյալ հրահանգավորումների և Բ. Դռան հայահալած քաղաքականության այլ դպրելի մանրամասնությունների մասին։

Մի այլ զեկույց մեզ տեղեկացնում է, որ Մ. Սրմանյանը թուրքական իշխանությունների կողմից իրավացիորեն կասկածվում է որպես «Պաշտպան Հայրենյաց»-ի ղեկավարներից մեկը[35]։ Մ. Սրմանյանը չհերքելով «կանուխեն ավելի համարձակ գաղափարներու ծառայած լլալը», գրում է, որ Կարինի կուսակալը իրեն էլ էր ցանկանում խառնել այդ գործի մեջ. «թեպետ առաջնորդարանի փոքրավորը բանտարկելով և Բրուսյան տուն լրտեսներով շրջապատելով ալ նշան մը չէր կրցած ձեռք անցանել»[36]։

31 Ասորիների հոգևոր և քաղաքական առաջնորդը Վանի վիլայեթում և շրջակայքում։

32 Այլ տեղերում նաև Օրեյզուլլա, Աբեյզուլա, Ուրեյզուլլա, Օրեյզ-Ուլլա։

33 АВПР, ф. Посольство в Константинополе, г. 1881, д. 1567, л. 21—22.

34 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 2—3.

35 Там же, лл. 83—85, 123—128.

36 Մ. Սրմանյան, Խոհ և խոսք, Երևան, 1929 թ., էջ 18 և 121։ Ռուսական թերթերը նույնիսկ գրում էին, որ Սրմանյանի փախուստը կանխելու նպատակով թուրքական իշխանությունները թունավորել են նրա ձին (տե՛ս «Московские ведомости». 1883. № 7)։

Այս ու սրան հաջորդած մի շարք հանգամանքներ և Օրմանյանի չափավորություններ, պատճառ դարձան, որպեսզի նա հետագայում, հայկական շարժումների վերելքի շրջանում, վերապահ դիրք դրավի նրա նկատմամբ։

Սակայն անաչառ լինելու համար պետք է դիտել, որ այդ միաժամանակ կապված էր այն պայմանների հետ, որում Օրմանյանն ստիպված եղավ գործել։ «Ազգին ամենեն փոթորկալի վիճակին մեջ դիս պատրիարք կարգեցին», իրավացիորեն ասել էր նա Երուխանի հետ ունեցած մի դրույցում[37]։ Անշուշտ բաժանում ենք նաև Հ. Ճ. Սիրունու խորհուն դիտողություններ. «դեպքերուն հետ էր, որ փոխվեցան իր տրամադրություններն ալ։ Ամեն մեկ հարվածի հետ, զոր հայ ժողովուրդը կկրեր, իր ներսեն ալ բան մը փլած էր։ Խանդավառություններ ներսը մարեր էր տակավ, հետզհետե սկեպտիկ դարձեր... Օրմանյան հեռու է սակայն հայ ժողովուրդը մեղավոր կարծելի այն շարժումներուն մեջ, զորս այն փորձեր է հանուն իր ազգային, և որոնք պատրվակ պիտի ըլլային դահիճներուն համար իրենց նախճիրը արդարացնելու։ Օրմանյանն մեղավոր չի գտներ հայ ժողովուրդը, ոչ այն պահուն, երբ կյանքի, ինչքի և պատվի ապահովություն կպահանջեր աշխարհեն, ոչ ալ այն ատեն՝ երբ իր դիմումներուն մեջ հուսահատ, խաբված, պիտի մղվեր հուսահատական ճիգերու»[38]։ Բայց Արևելյան Հայաստանում վանքապատկան հողերը դրավելու առթիվ հայկական հուզումների կապակցությամբ ունեցած խոհերում, հակասություններով լի այդ խոշոր գործիչը, պարփակվելով հոգևորականի իր հնացած սրտի մեջ, հայտարարեց անգամ թե «Շարժումին բուն հիմքը և դիմադրության մղող իսկական դրդիռը հայության կրոնական զգացումն էր»[39]։

Վերը հիշված հաղորդման մեջ Զևտվերուխինը Կարինից հայտնում է, որ ինչպես ռուսական գլխավոր հյուպատոսությունն, այնպես էլ մյուս երկրների ներկայացուցիչները ձեռնպահ են մնում հայերի մասսայական ձերբակալությունների նկատմամբ[40]։ Ինքնստինքյան հերքելով ռուսական թերթերում հրապարակված այն ստահոդ լուրը, թե իբր «Էրզրումի ռուսական հյուպատոսը հայերին վերցրել է իր հովանավորության տակ», դրանով նա ձգտում էր ցույց տալ, որ Ռուսաստանը նրանց բարին է ցանկանում[41]։ Սխալ պետք է համարել նաև «Մշակ»-ի Կարինի թղթակցի հաղորդումը, թե ռուսական հյուպատոսը «երկու տեղացի ռուսահպատակ բանտարկյալ հայերու ազատության համար եւ անտարբեր մնաց»[42]։

Իրականում բանտարկված էր ռուսահպատակ մի հայ՝ գինագործ Իսրայել Հովհաննիսյանի (վավերագրում Օգանեզով) Կարապետ անունով 18-ամյա որդին (Օրմանյանի մոտ հավանաբար շփոթմամբ Կարապետ Իսրայելյան. նույնը և մամուլում), որի ձերբակալությունից ազատման համար Կարինի ռուսական հյուպատոսությունը միջամտում է, բայց ոչ մի արդյունքի չի հասնում[43]։

---

37 Տե՛ս Գ. Հովհաննիսյան, Մաղարիա արք. Օրմանյան և կաթողիկոսական բնորոշություն, Թիֆլիզ, 1911, էջ 17—18։

38 «Էջմիածին» ամսագիր, Գ, էջ 10 և հ, էջ 58։

39 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 3, էջ 5169, Նրուսաղեմ, 1927։

40 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 83—85.

41 «Московские ведомости», 1883, № 3 և այլ թերթեր։

42 «Մշակ», 1883, № 33։

43 АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 83—88.

Պահպանվել են անգլիական դաղութակալության բացահայտ ներկայացուցիչների, ինչպես նաև նրանց քողարկված համագործակիցների՝ նույն անգլիական և առավել ամերիկյան միսիոներների նողկալի գործունեությունը մերկացնող բազմաթիվ փաստաթղթեր։

Օգտվելով հայ ընտանիքների տնտեսական վատ կացությունից, միսիոներները վճարում էին նրանց զինվորական տուրքերը, նետում այլ փշրանքներ և լայնորեն բացում իրենց մարդասիրության ուռկանը կարիքից դեպի այն մղվող բնակչության առջև։ Խոշընդոտվում էր հայ ազատագրական շարժման ճանապարհը, անխուսափելիորեն ստեղծելով պայքարի մի նոր, լրացուցիչ թատերաբեմ։ «Այդ կեղծ բարերարները,—գրել է Գ. Սրվանձտյանը,—ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ, որ զմեզ, երև վայրիի, պատրաստ ոչխարներու, և պարարակ կովերու տեղ դնելով, մեր փարախեն կուզեն խրտեցնել, հեռացնել և իրենց ձեռը ձգելով ի սպանդ մատուցանել...»[44]։

Մեր պատմագիտական գրականության մեջ երբեմն ոչխալ կամ թերի է լուսաբանված ռուսական ցարիզմի քաղաքականությունը թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարի դրոշ պարզած ժողովուրդների, այդ թվում արևմտահայ ժողովրդի նկատմամբ։

Ցարիզմի քաղաքականությունը, ինչպես հայտնի է, կամ ներկայացվել է բացառապես հեռադիմական և նվաճողական, ուստի թշնամական մեր ժողովրդի նկատմամբ, կամ ավելի հաճախ, անվերապահորեն՝ դրական, քանի որ Ռուսաստանի հաջողության դեպքում Արևմտյան Հայաստանը կանցներ նրա տիրապետության տակ, իսկ այն, ինչ էլ որ լիներ, երիցս գերադասելի էր ու թեթև թուրքական ահեղ յաթաղանից։

Հանրահայտ է արևմտահայ աշխատավորության ռուսական դիրքորոշումը և նրա ճշմարտացիությունը։ Սակայն առնվազն մանկական միամտություն է ցարիզմի գաղութային քաղաքականության մեջ տեսնել շահագործվող ժողովուրդների ազատագրության միսիա, թեկուզ նույնիսկ այն առումով, որ «ժողովուրդների բանտ» համարվող ցարական Ռուսաստանը երբեք էլ չէր ցանկանա իր հարավային սահմանների վրա, որը ոտնակոխելով նա պետք է անցներ Եգիպտոս, Իրաք ու Հնդկաստան, ստեղծել «Նոր Բուլղարիա», «Նոր Լեհաստան» կամ նման մի այլ պատնեշ։

Այդ տեսակետից հատկանշական է ռուսական ցարիզմի պաշտոնական գործակալներից մեկի՝ վերը նշված Ս. Դեննետի խորհրդածությունները հայ ժողովրդի, նրա ապագայի և նրան ինքնավարություն տալու աննպատակահարմարության մասին։

«Հեշտությամբ կարելի է պատկերացնել,—գրում է նա,—հակասոցիալական (?) ձգտումների ինչպիսի մշտական օջախ, նիհիլիստական բանսարկությունների բուն և ռուսական պետության նկատմամբ թշնամական դավերի վայր չէր դանդաղի դառնալ մեր Կովկասի հետ հարևան տերիտորիան, եթե այնտեղ այս կամ այն կերպ կազմակերպվեր ավտոնոմ Հայաստան»։

Ապա վախ հայտնելով, որ անգլիացիները կօգտվեն առիթից ավտոնոմ Հայաստանը օգտագործելու Ռուսաստանի դեմ, նա շարունակում է. «...դժվար կլինի մեզ պաշտպանել Կովկասի մեր հայ ազգաբնակչությանը այնտեղ

44 Գ. Սրվանձտյան, Թորոս ագրար, Պ. Պոլիս, 1884, մաս 2-րդ, էջ ԺԸ։

(Արևմտյան Հայաստանի—Ռ. Հ.) մեքենայությունների բացասական ազդեցությունից»։

Հետաքրքրականն այն է, որ այդ մեքենայությունները նա համարում է Արևմուտքում ուսած և իր կողմից աթեիզմի մեջ մեղադրվող հայ երիտասարդության միջոցով «ամեն կարգի սոցիալական թեորիաների», «սոցիալիստական գաղափարախոսության բոլոր կործանարար տարրերի» տարածումը «իրենց նորաստեղծ հայրենիքում»։

Քիչ հետո, մի շարք վիճելի դիտողությունների հետ միասին, հայ ժողովրդի հասցեին նետելով, հավանաբար Կովկասի փոխարքայի պալատից և թուրքական շուկաներից հապճեպորեն հավաքած ինչ-որ հերյուրանքներ, վերոհիշյալ զեկուցագրի հեղինակը կասկած է հայտնում, թե հայ ժողովուրդը քաղաքական անկախություն ստանալու դեպքում միջազգային հարաբերությունների մեջ որևէ օգտավետ դեր կատարի Ռուսաստանի համար»։ Դրանով իսկ խորհուրդ տալով, որ հայերին ինքնավարություն կամ անկախություն տալը աննպատակահարմար է։

Այս էր ցարական դիվանագիտության պատասխանը ձեռքը իրեն մեկնած արևմտահայ ժողովրդին։ Պատասխան, որը քիչ ուշ Լորանով-Ռոստովսկու բերանում դարձավ ահալի մի կոչ-զարհուրանք՝ «Հայաստան առանց հայերի»։

Եվ այն, ինչ ցարիզմը վախեցավ նույնիսկ մեղմորեն, առանց արցունքի կատարել, արյունով իրագործեցին թուրք դահիճները «հօգնությամբ գերմանական ասպետների»։

Ինչ վերաբերվում է «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության անկմանը, ապա պետք է ասել, որ նա ապրեց միայն իր մանկության շրջանը ու դադարեց գոյություն ունենալուց պատանեկության շեմին, իր փայփայած դաղափարների կենսագործման համար մղած պայքարի առաջին քայլերն անելիս։ Դադարեց, որովհետև նրա համար դեռ ճշտորոշված չէր անգամ այն ուղին, որով նա ցանկանում էր տանել մի ամբողջ ժողովուրդ։

Լավագույն իդեալի գաղափարը առանձնահատուկ ուժով կերպարանավորվում է հատկապես տառապող մարդու, հարստահարվող ժողովրդի մտայնության մեջ, ուղենշելով նրան իր մեծագույն նպատակին հասնելու երբեմն ճիշտ, իսկ երբեմն էլ անագորույն մի ուղի։

«Պաշտպան Հայրենյաց»-ը խարխափեց այդ ճանապարհներին։

«...Մեր գործունեությունը թյուր ուղղություն են ունեցեր, ուստի տարօրինակ չէր, որ մի այդպիսի ցավալի հետևանքի պիտի հասնեինք... բայց մարմինն ու կենդանությունը առողջ է՝ օր մը ծնելու ակնկալությամբ... Նպատակներս արդար է, ընդսմին մեզ կմնա իմաստուն եղանակով միջոցներ հայթհայթել այդ նպատակին տիրելու համար...»[46]։

Այսպես էին բարբառում «Պաշտպան Հայրենյաց»-ի ձերբակալությունից ազատ մնացած անդամները Թիֆլիսի իրենց բարեկամներին 1883 թ. մայիսի 14-ին։

---

[45] АВПР, ф. Политархив, г. 1881/1884, д. 1625, л. 123—128.

[46] «Հայրենիք» շաբաթաթերթ, 1905, 9/12, Բոստոն։